ՔԱՂՎԱԾՔ

«Երևանի Տ.Շնչենկոյի անվան թիվ 42 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի
21.06.2023թ. կայացած նիստի N 06 արձանագրությունից

Նիստին մասնակցում էին «Երևանի Տ.Շնչենկոյի անվան թիվ 42 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի բոլոր 9 անդամները:

Օրակարգ՝

1. Ուսումնական հաստատության 2023 թ-ի եկամուտների և ծախսերի նախահաշվի քննարկում:

Տնօրեն Էլ.Թումանյանը ներկայացրեց 2022-2023 ուստարվա 2-րդ կիսամյակում դպրոցի աշակերտների թիվը՝ 396: Համաձայն ՆՀԿ-3 25/01/23 պայմանագրի՝ տրվել է 75615.8 հազար դրամ: Կամավոր ատեստավորում անցած մեկ ուսուցչի տրամադրվել է 1914.4 հազար դրամ՝ մինչև 31.08.23թ-ը և տարակարգ ստացած երկու ուսուցչի՝ 280.4 հազար դրամ՝ տարվա համար: Տարվա մնացորդը կազմում է 82748.6 հազար դրամ, որից 63972.1 հազար դրամը՝ գույքի համար, 7434.9 հազար դրամը՝ դահլիճի նախագծային աշխատանքների համար և 30.0 հազար դրամ՝ որպես 1 աշակերտի մրցանակ:
Նշվեց, որ աշխատավարձի ֆոնը կազմում է 84672.0 հազար դրամ:

Հիմք ընդունելով ներկայացված զեկույցը՝ կառավարման խորհուրդը

Որոշեց

Հավանություն տալ 2023 թ-ի եկամուտների և ծախսերի նախահաշվին և ներկայացնել ՀՀ ԿԳՄՍՆ հաստատման:

Կառավարման խորհրդի նախագահ՝ Ա.Մկրտչյան

Քարտուղար՝ Ա.Մարտիրոսյան